



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 օգոստոսի 2023 թվականի N ³⁰³-Ա

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԵՎ ԹԱՄԱՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2335-Ն և 2018թ. նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշումներով հաստատված կարգերով՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանին՝ 1 օրով՝ 2023թ. օգոստոսի 24-ին, մարզպետի տեղակալի օգնական Արտաշես Մարտիրոսյանին և մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Թամարա Կարապետյանին՝ 3 օրով՝ 2023թ. օգոստոսի 24-ից 26-ը գործուղել Սիսիան համայնք՝ համայնքում նախատեսված միջոցառումներին առընչվող նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու և մասնակցելու նպատակով:

2. Մարզպետի աշխատակազմի սպասարկող անձնակազմի վարորդ Սեյրան Աղալոյանին՝ 2023թ. օգոստոսի 24-ին՝ Հյունդայի Սոնատա մակնիշի 421 LL 60 պետհամարանիշի ավտոմեքենայով, ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:

3. Ֆինանսական վարչությանը՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ.օգոստոսի 24
ք. Կապան